

սուրբ հարցն մերոց ինամով պահանջիք ի կրակէ ի ջրային տեղուցէ եւ ի թքոտ ձեռքն թուղթ մի շրջեցէ եւ այնպիսիքն օրհնեալ լինին Աստուծոյ եւ ամենայն սրբոց ամէն հոգոց հանդուցելոց Գրիստոս որդի Աստուծոյ. հայր մեր որ»:

12.

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ Ս. ԳԵՈՐԳ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ի ՊԼՈՎԴԻՒՒ

ԹՈՒՂԹՐՔ՝ 12: — ԷՁԲ՝ 18: — ՄԵՆՈՒԹԻՒՆ՝ 27, 50 X 19 X 0, 50: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին 16 X 10: — ՏՈՂՔ՝ 23 (բղ. 3բ—6բ) եւ 34 (բղ. 7բ—11ա): — ՆԻԻԹ՝ բուրբ, ընտիր եւ ողորկ: — ԿԱԶՄ՝ լաւաբարեայ լաքակազմ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ մաքուր եւ լաւ պահպանուած վիճակի մէջ: — ՄԱԳԱՂԱԹՒԱՅ ՊԱՀՊԱՆԱԿ՝ չուկի: — ԳԱՏԱՐԿ՝ բղ. 1բ, 2բ եւ 12: — ԳԻՐ՝ բոլորգիր: — ԶԱՐԳԱԳԻՐՔ՝ 2—3 հատ գրութեան սկիզբը, պարզ բնութագիր եւ բոլորգիր, ոսկեգոծուած: — ԶԱՐԳԱՆԿԱՐ՝ մէկ՝ գրեցողի սկիզբը (բղ. 3ա), գուրկ արժէքէ: — ԳՐԻԶ՝ Պետրոս Գայիք Տէրեայ Ստեփանեան Աղբիւնուպոլսեցի: — ԺԱՄԱՆԱԿ՝ ՌՄՀԷ (= 1828): — ՏԵՂԻ՝ փիլիպպուպոլիս (= Պոլսի, Ֆիլիպէ): — ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ՝ ֆիլիպի Ս. Գեորգ եկեղեցւոյ:

Մատենան է՝ Ստորագրութիւն Ս. Գեորգ եկեղեցւոյ փիլիպպուպոլսոյ. կը բովանդակէ՝ ա. Գրքոյկին ճակատը՝ առնուած սկահակաձեւ ոսկեգոծ շրջանակի մը մէջ (թղ. 2ա). բ. «Վիպասանութիւն առման Սուրբ Գէորգ եկեղեցւոյ, որ ի Մակեդոնիա ի Փիլիպպուպոլիս՝ ի ձեռաց ազգին Յունաց...» (թղ. 3ա—6բ). գ. «Ստորագրութիւն Սրբոյ Եկեղեցւոյն, որ ի Փիլիպպուպոլիս քաղաք՝ նորոգ կառուցելոյ, յանուն սրբոյն Գէորգայ քաջամարտիկ զօրավարին Քրիստոսի» (թղ. 7ա—11բ):

ՅԻՇՍԱՍԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ. 1. թղ. 2ա. «... Ի նախկին դադարաւ ընդարձակօրէն արարեցելոյ. ի Հաղար հարիւր քսան եւ վեց թուարեութեան Հայոց, ժողովեալ բարեյօժարութեամբ, զՄեսրոպ Եպիսկոպոս, եւ զնորոգութեամբն Աստուծոյ Առաջնորդ եւ վերատեսուէջ քաղաքիս: Յամի տեան 1828, եւ ի Հայոց ՌՄՀԷ յունիսի 16 ի Փիլիպպուպոլիս ընդ հովանեալ Սուրբ Գէորգ եկեղեցւոյ»:

2. թղ. 6բ. «... Եւ անձն այն իմաստասէր՝ զայս եղելութիւն ապա ի սկզբանէ մինչեւ ցկատարած զովելի եւ բարձրագոյն ոճով

1 Ահնարկութիւն Երեմիա Զէլեպի Բէօմիւր-ճեանի:

ուսկետող շարադրութեան, նմանութեամբ եւ օրինակաւ դարգարեալ, ի սիրովական մխլթարանս մատուցեալ անձանց այնոցիկ կարօտելոց՝ շարահիւսեալ է, ի Հաղար հարիւր քսան եւ վեց թիւ Հայոց. եւ յապրիլի ԺԳ, ի Կոստանդինուպոլիս ի յեռամատրան Եկեղեցւոյ ամենասուրբ Աստուածածնի եւ միջոտ անարատ կուսի:

Որ արդ համառօտեալ ի դիւրութիւն իմացման հասարակօրէն յԱնդրիանուպոլսոյ Մեսրոպ Եպիսկոպոսէ. է թիւ Հայոց՝ Հաղար երկու հարիւր եօթանասուն եւ եօթն, եւ ի յունիսի՝ վեչտասաներորդն ի Փիլիպպուպոլիս:

Իսկ արդ՝ վերստին առ օրինակեալ սոյն սա ի նոյն օրինակէ անտի, Պետրոս զարէս Տէրեայ Ստեփանեան, ընդ Անդրիանուպոլսեցւոյ. ի թիւ Հայոց՝ ՌՄՀԷին»:

3. թղ. 11. «... Հուսկ ուրեմն արժանի տեսլիք յիշման ի բարի զՄեսրոպ Եպիսկոպոս զնուստ հոգի. եւ ըզնորութեամբն Աստուծոյ առաջնորդ եւ վերատեսուէջ քաղաքիս, որ ներկայ գտեալ նորոգութեան սրբոյ եկեղեցւոյս՝ զճազրեցի զհամառօտ ծանօթութիւնս: Խնդրեմ, որ դադարաւ դա, եւ ըզվորք յիշատակիս զրեցէ, եւ որ արացէ՝ զվարձըս ի Տեանէ ընկալցի: Ի ՌՄՀԷ, եւ ի սեպտեմբերի ԻՆ, ի Փիլիպպուպոլիս քաղաք»:

Սոյն եկեղեցւոյս բազմամեայ երախտաւոր՝ Զաքարիա մաքրակրօն վարդապետն մեր, ի շնորհն սրբոյ եկեղեցւոյս վերակոչեաց տէր առ ինքն ի սեպտեմբերի ԻԹ, եւ ի թուին Հայոց ՌՄՀԷ, յաւուր տօնի սրբոյն Գէորգայ քաջայաղթ զօրաւորին Քրիստոսի տեանն մերոյ. որ եւ եղաւ առ զրան տաճարիս սրբոյ եկեղեցւոյս ի դիր հանդստեան՝ արժանաւոր իւրոյ հոգեջան երախտաւորացն, զոր տէր ընդ սուրբս դասեցէ եւ կենդանի օրհնութիւնն ի մէջ մի՛ վերջացի. ամէն:

Իսկ արդ՝ վերստին առ օրինակեալ սոյն սա՝ ի նոյն օրինակէ անտի՝ ի յամենախոնարհ եւ նուաստազունեղ մարդէ տեղոյս՝ Պետրոս անուն եւեթ զարէս Անդրիանուպոլսեցւոյ. յորդոց վաճառական Տէրեայ Ստեփանի հանդուցելոյ ի տէր:

Յամի տեան 1828, եւ նոյեմբերի 7 ի սոյն Փիլիպպուպոլիս բարեհամբաւ քաղաքի: Վերջ»:

Ասոնցմէ զառ զբոլորս սկիզբը (թղ. 1ա) տարբեր զբնով եւ քիմիական մատիտով

զրուած է աւելի վերջէն՝ նաեւ հետեւեալը. «Սուլթան Մէհմէմէտ Գ. ըզ զահակայեց յամին Քրիստոսի 1648. եւ Հայոց զաղթականութիւնը իւր զահակալութեան 27րդ տարին զաղթած է Բօլոնիոյ Գամէզ քաղաքէն Անդրիանուպոլիս եւ անտի մաս մը փ. Պոլիս. ա՛յն է յամին Քրիստոսի 1675»: Իսկ աւելի վարը՝ պարզ մատիտով զրուած է՝ «Հաստատութիւն Օսմանեան կայսրութեան թուականն է 1299»:

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ. — Մատենիս Ա. մասը՝ «Վիպասանութիւն առման Սուրբ Գէորգ եկեղեցւոյ...» հրատարակուած է «Բաղմալէպ»ի մէջ (1927, էջ 238—239)՝ Յ. Քիւրտեանի կողմէ՝ վերակներով եւ պակասաւոր, հարուստներու մասնակի հրատարակութիւններ ըրած են՝ Վահան Մանուէլեան («Շաւիղ», Վանա 1900, Թ. 11), Թ. Թ(աղաւորեան) («Տեղեկագիր Գրասիրաց Երայրութեան», Ֆիլիպէ 1914) եւ Եր. Եպ. Փէրոսահեան («Փ. Պոլսոյ Հայ Գաղութը եւ Եկեղեցին, 1929»):

ՆԵՐՍԷՍ ԳԱՍԱՊԵԱՆ

13.

Հ Ա Ի Ա Ք Ա Յ Ո Յ Ի ՇՈՒՄԵՆ

ԹՈՒՂԹՐՔ՝ 263: — ՄԵՆՈՒԹԻՒՆ՝ 16 X 10: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ 11 X 7: — ՏՈՂՔ՝ 18: — ՆԻԻԹ՝ բուրբ բարակեայ, գորաւոր, քիչ մը գորշ: — ԿԱԶՄ՝ լաւաբարեայ, գորաւոր, քիչ մը գորշ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ բարակամ լաւ մնացած, վարի լուսանցի կողմերը շառ մաշած, երբեմն աճեցրեցի, մէկ քանի բուրբ շարակնոց (շապուղի)՝ առջեւ երկու բուրբ շարակնոց (շապուղի)՝ երկու կողմերէ կը կտրուի: — ԳԻՐ՝ բոլորգիր: — ԵՊԻՍԿՈՒՊՈՒՄ՝ կարմիր: — ԼՈՒՍԱՆՅԱԶԱՐԻՔ ԵՒՆ՝ չկան: — ԺԱՄԱՆԱԿ՝ ԺԳ. Ե վերջ: — ԳՐԻԶ՝ Ստեփանոս: — ՏԵՂԻ՝ անմաք: — ՏԵՐ՝ Մաքրոս քաջամարտիկ: — ՅԻՇՍԱՍԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ՝ Բղ. 90ա, 95բ, 128բ, 262բ եւն: — ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ՝ Մատենան տեսայ ի Շումէն Տէր Աքանա քահանայ Այվազեանի մօտ (այժմ ի Սոփիա):

Մատենան է՝ Հաւաքածոյ:

1. թղ. 1ա. «Յովհաննու Ոսկերբաւոր ասացեալ յաղագս աղաւթից զպատուութեան: Լուարուք զրան Տեանն ահեղ եւ զարմանալի:

2. թղ. 3ա. Սուրբ վարդապետին վարձանայ ասացեալ խրատ վասն հաւատոյ ի Հայր եւ յՈրդի եւ ի սուրբ Հոգին: (2) ասուածութիւնն անհասանելի եւ անքակելի ասացին մեզ»:

Վերջը՝ «Հաւատացելոց ժողովրդեանը քրիստոնէից աւրհնութիւն սիրովն Քրիստոսի եւ ողջոյն ձեզ ի նուստ ծառայէս վարդապետէ ամէն»:

Թղ. 17ա. «Այլ յիշեցուցանեմ աստուածասիրութեան ձերոյ զպատուիրանն զոր կարգեցին սուրբ հայրապետք եւ վարդապետք եկեղեցւոյ: Ոյ սիրելի որդեակք իմ որ էք դասք արանց եւ դասերք իմ»:

3. թղ. 21բ. «Պատմութիւն վասն անքուն որդեանց թէ զի՛նչ են կամ ուստի՛ իցեն: Եւ արդ եկայք ժողովուրդք Աստուծոյ»:

4. թղ. 40բ. «Երանելոյն Մակարա զիտնաւորի խրատք ողջահաճ: Որոց լսեն զրանն Աստուծոյ եւ առնեն զպտուղ բարի»:

5. թղ. 42բ. «Հարցուն Աշոտա որդոյ Սմբատայ Հայոց թագաւորի եւ պատասխանի Եղնակա Հայոց վարդապետի: Թագաւորն ասէ. զի՛նչ է առաջաւորութեան խորհուրդն»:

6. թղ. 46ա. «Յովհաննու Ոսկերբաւոր ասացեալ է յաւետիս կուսին Մարիամու Աստուածածնին անարատին: Դարձեալ ինդութեան աւետիս. դարձեալ ազատութեան զգացուն»:

7. թղ. 55բ. «Յառաջին Կիրակէին պահոցն Սեւերիանոսի ուղափառի ասացեալ: Այր մի իջանէր...: Ապա ասէ զայր հայրապետ մի իջանէր»:

8. թղ. 59բ. «Պատմութիւն Աստուածամաւրն Տեանն ի թուոյ պատմութիւն երկուտասան ազգին էր Յովակիմ մեծատուն յոյժ»:

9. թղ. 78բ. «Յովհաննու Ոսկերբաւոր ասացեալ յաղագս չլաւոյ զվաղձանեալս, մանաւանդ, որ տղայքն են: Մեր այսուհետեւ մանաւանդ...»:

10. թղ. 90բ. «Երանելոյն Սեւերիանոսի ասացեալ ի ծնունդն Փրկչին Աստուծոյ մերոյ: Արդ եկն եհաս մեզ երկնային զարունն Քրիստոս»:

11. թղ. 95բ. «Վասն տղայոց զոր կոտորեաց Հերովդէս ի ծննդեան Քրիստոսի եւ վասն վրէժխնդրութեան նորին եւ չար սատակման: Այլ եւ ի ժամանակին իբրեւ ծնալ Քրիստոս ի Բեթղաճէմ»:

12. թղ. 100ա. «Երանելոյն Եպիսկոպոսի Կիպրացւոց Եպիսկոպոսի ասացեալ զովստ ի սուրբ Կոյսն Մարիամ Աստուածածնի եւ ի մայրն Փրկչին: Զփայլեալ ճառաղայթս Աստուածածնին»:

13. թղ. 117բ. «Երանելոյն Պրոկղի Եպիսկոպոսի Կոստանդնուպոլսի ասացեալ ի սուրբ Կոյսն Մարիամ եւ սուրբն Ստեփաննոս նախավկայն Քրիստոսի Աստուծոյ մերոյ: Երեւելի արեգակն ընդ երկնեալ ծագելով զարուսեակն»:

14. Թղ. 129ա. «Երանելոյն Գրիգորի Նրևացոյ ասացեալ ի Բեթլէհէմի մանկունքն: Դարձեալ ծերունիս ես առ ի բանիցս ամիմ ասարկէզ»:

15. Թղ. 138ա. «Երանելոյն Եփրեմի ասացեալ ի ծնունդ Փրկչին: Որ էրն ի սկզբանէ առ Աստուած, Աստուած բանն կենդանի, զաւրաւոր եւ ամբողջից»:

16. Թղ. 145ա. «Յուսուարի ԺԱ. Յիշատակ է Պետրոսի հայրապետին եւ Աբիսողոմայ Սարկաւազի վկայաբանութիւն նոցին: Ի Թագաւորութեան Դէոկղիտիանոսի էր հալածուին մեծ»:

17. Թղ. 161բ. «Վկայաբանութիւն սրբոյն Սարգսի զաւրայվարին Բրիստոսի Եւսեբի... եպիսկոպոսի ասացեալ: Եւ էր Սարգիս այր լի շնորհաւք»:

18. Թղ. 187բ. «Երանելոյն Յակոբայ Սրճեցոյ եպիսկոպոսի ասացեալ յաղագս Անգիոքայ թէ որպէս մտին անդ առաքեալքն Տեառն եւ աշակերտել զնոսս յանուն Յիսուսի: Լուսով բանիւ քո զամ առ քեզ»:

19. Թղ. 219բ. «Կանովնական հրամանք լուսաւորիչ Սուրբ Հարցն մերոց առաջնորդաց եկեղեցոյ զոր գրեցին համառաւ, ազնեա Բրիստոս: Մեղուցեալ ծառայո Բրիստոսի Յոհաննէս Եղնկացի հրամանաւ սուրբ պատարագին (sic) ամենայն Հայոց Յակոբայ, որ ի թվիս Հայոց 21 առաքեաց զմեզ ի մայրաքաղաքս Թէոդուպալիս»: Թղ. 225ա. «Երկրորդն Յոհաննէս վարդապետ: Եւ զաւրհնութեան պսակն յայնժամ գրեցին»: Թղ. 228բ. «Երրորդ Յոհաննէսի»:

20. Թղ. 231բ. «Յոհաննու Գառնեցոյ խրատ հոգէչահ եւ ամենայն մարդոյ մանաւանդ զժամ (?) արարի ի խնդրոյ Սարգիս քահանայի, իւր ձեռամբ գրածն էր եւ ես մեղուցեալ եւ սուտանուն քահանայ անուամբ եւ զգործով իմով անարժան ձեռամբս աւրինակեցի: Ծառայակից քո ի Բրիստոս Յիսուս Յովաննէս Գառնեցի հարցանեմ զողջունէ ըմբմէ»:

21. Թղ. 260ա. «Յաղագս ժամու սուրբ պատարագի: Պարտ եւ պատշաճ է մեզ պատարագել»:

22. Թղ. 264. «Նորին Յոհաննու խրատ վասն երրորդ ժամու աւուրն յաղագս պատարագին: Աստուած, Աստուած մեր, Աստուած կենարար»:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ. Թղ. 262բ. «Փառք...: Որոյ շնորհին սկիզբն արարի

աստուածային սուրբ զրոցս եւ ողորմութեամբ եւ ազնեականութեամբ նորին յանկհանի: Արդ ով աստուածասէր սիրելի հայր մեր ըստ հոգւոյ Աստուծոյ Մաթէոս...»:

Թղ. 90ա. «Չստացող սուրբ մատենիս զՄաթէոս սրբասէր քահանայ եւ զբարի կենակից իւր եւ զծնաւզան իւրեանց... յիշես՛ ջիւք ի Բրիստոս»:

Թղ. 95բ. «Տէր Յիսուս ողորմեայ ստացողի սորայ Մաթէոս քահանայի եւ ծնաւզաց իւրոց... Նայեւ ինձ բաղամեղ զըջի սուտանուն Ստեփանոս որ անուամբ կոչի եւ զործով ոչ...»:

Թղ. 128բ. «Բրիստոս Աստուած ողորմեա ստացողի զրոցս Մաթէոս քահանայի եւ ծնաւզաց իւր ամէն: Նաեւ ինձ բաղամեղ զըջի սուտանուն Ստեփանոսի...»:

Թղ. 128ա. «Չանարժան զրիչս եւ զբարչահասակ (°) եղբայրն իմ զՄկրտիչն զիոխեցեալն առ Բրիստոս յիշեցէք...»:

Թղ. 145ա. «Ձբաղամեղ զրիչս եւ զստացող սորին զՄատթէոս քահանայ աղաչեմ յիշեցէք» եւն եւն:

14.

Ա Ս Տ Ղ Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Ի Ի Ն
Ի Ռ Ո Ւ Ս Ճ Ո Ւ Գ

ՄԵՇՈՒԹԻՒՆ՝ 19,5 X 14: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ 15 X 10, երկսիւն: — ՏՈՂ՝ 29: — ՆԻԻԹ՝ բուղբ: — ԹԵՐԹ՝ Ա.—Ի. ճշմանկում: — ԿԱՉՄ՝ կաշեպատ, գարդարում, քիչ մը վնասուած: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ, միայն մի քանի բուղբ կազմէն բաժնուած կամ աղտոտած: — ԳԻՐ՝ նորագիր: — ԺԱՄԱՆԱԿ՝ հաւանութիւն ժե.—ժԸ. դար: — ԳՐԻԶ, ՏԵՂԻ եւ ՏԵՐ՝ անձանօր: — ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ՝ նոր բաներ, հմտ. վարը: — ՏԵՂԱԿՈՒԹԻՒՆՔ՝ Սեպիականութիւն է Պր. Համբարձում Գրիգորեանի ի Ռուսնուգ (պժմ ի Բուկարեստ), որ կը կաքծէ քէ գիրքս գրուած է 785ին, որ սակայն անկարելի է:

Մատենան է Աստղագիտութիւն:

Թղ. 3ա. Կը սկսի «Յանուն Աստուծոյ զթածին եւ ողորմածին եւ Աստուած կատարեցէ զվառաբանութիւնս իւր, զի իմաստութիւն Աստուծոյ զամենայն ինչ պարագրեալ ունի եւ զօրութիւն նորա յամենայն տեղիս մտեալ է ի իշխանութեամբ»:

1. Թղ. 3ա. «Ինչ, զուրն առաջին վասն առաւելութեան գիտութեանց, զի իմաստութիւն կենդանութիւն է հոգւոյ եւ բանականութեան: — Թղ. 4ա. Դուրն երկրորդ վասն առաւել գիտութեան իմաստութեան արհեստիս այսորիկ: — Թղ. 6բ. Դուրն երրորդ, որ ցուցանէ թէ որպէս արնեն զայս գիտութիւնս եւ է ԺԲ. դուրն: — Թղ. 8բ. Այլ դուրն վասն տլամաթիւն, որ տլամաթիւն գիտութիւն է արհեստիս: — Թղ. 9բ. Երկրորդ Փասլն, զոր յիշեմք թէ կարէ մարդ բովանդակ զամենայն աստղ իմանալ: — Թղ. 11ա. Երրորդ Փասլ է այն որ ոմանք թէ որպէս գտան զայս արուեստս: — Թղ. 14ա. Երկրորդ դուրն գիտութեան աստղարաշխութեան, որ ասեն նութեան աստղարաշխութեան, զոր հարկ եւ պարտ է գիտութիւն, զոր հարկ եւ պարտ է գիտութիւն, զոր հարկ եւ պարտ է գիտութիւն, զոր հարկ եւ պարտ է գիտութիւն: — Թղ. 22բ. Յաղագս շարժուն տեղ մարդոյ: — Թղ. 22բ. Յաղագս շարժուն տեղ մարդոյ: — Թղ. 25բ. Երկրորդն վասն կենդանակերպիցն: Խոյն բոլոր մարմին եւ պատկերօք լինի: 2. Թղ. 26բ—44ա. Այլ եւ այլ ցուցումներ, Փասլներ եւ դուրներ: 3. Թղ. 44բ. (պատկերներ). Չոհարն, որ է երեւակ, հարկուր է: — Թղ. 45ա—47բ. Մուշթարին, Մառեթին, Շէմս, Չոհրէ, Աւարիան, Ղէմէր: 4. Թղ. 48ա—59ա. Այլ դուրն որ յիշեմք զթէպիւր աստղերն, որ է ասպեթ, որ կոչի հաստատ: — Թղ. 48բ. Առաջին խոյն եւն: 5. Թղ. 59ա—64բ. Պատկերներ՝ Յուրն, Եկաւորն, Խեցեթիւնն, Առիւծն, Կոյսն, Կշիւն, Կարիւն, Աղեղնաւորն, Այծեղջերն, Ջրհոն, Չուկն: 6. Թղ. 64բ. Այլ դուրն որ յիշեմք զաթիւնայ աղարիւթն: Այլ եւ այլ դուրներ յաջորդաբար: 7. Թղ. 67բ—114բ. Պատկերներ, մեկնութիւններ (աղիւսակներ): 8. Թղ. 115ա. Յանուն Աստուծոյ զթածին... դուրն ժե. եւ մուղարիւթն Բ. եւ աստղարաշխութեան ի կենդանակերպիցն: Մէկ քանի դուրեր է վերջ կու գան Շուրտայն, Պուտայն, Թուրիայն եւ Տալլայն եւն եւն: 9. Թղ. 127բ. Դուրն ժԸ. որ ցուցանէ զանուն զպահերուն, զցորեկիւնին զգիշերօրն վան, ասաց Պալինասն: — Թղ. 128բ. Վասն տլամաթիւն: — Թղ. 130ա—136ա. Դուրն է Բ. որ յիշեմք զտլամաթիւն, որ Ապուտատիւն է ասացել: 10. Թղ. 138բ. Պուլուրքն է. աստղին: — Թղ. 144ա. Այլ դուրն որ ցուցանէ թէ զայս գիտութիւնս, որպէս արնեն եւ զաստիւրուն տալաթիւն, ասաց Ապուտաղարն: Ապա՝ «Խաւն»ները: 11. Թղ. 157ա. Գովասանութիւն լուսըն-

տիս այսորիկ: — Թղ. 6բ. Դուրն երրորդ, որ ցուցանէ թէ որպէս արնեն զայս գիտութիւնս եւ է ԺԲ. դուրն: — Թղ. 8բ. Այլ դուրն վասն տլամաթիւն, որ տլամաթիւն գիտութիւն է որ զվերի աստղերուն զօրութիւնն կուրեթէ: — Թղ. 9բ. Երկրորդ Փասլն, զոր յիշեմք թէ կարէ մարդ բովանդակ զամենայն աստղ իմանալ: — Թղ. 11ա. Երրորդ Փասլ է այն որ ոմանք թէ որպէս գտան զայս արուեստս: — Թղ. 14ա. Երկրորդ դուրն գիտութեան աստղարաշխութեան, որ ասեն նութեան աստղարաշխութեան, զոր հարկ եւ պարտ է գիտութիւն, զոր հարկ եւ պարտ է գիտութիւն, զոր հարկ եւ պարտ է գիտութիւն, զոր հարկ եւ պարտ է գիտութիւն: — Թղ. 22բ. Յաղագս շարժուն տեղ մարդոյ: — Թղ. 22բ. Յաղագս շարժուն տեղ մարդոյ: — Թղ. 22բ. Յաղագս շարժուն տեղ մարդոյ: — Թղ. 25բ. Երկրորդն վասն կենդանակերպիցն: Խոյն բոլոր մարմին եւ պատկերօք լինի:

2. Թղ. 26բ—44ա. Այլ եւ այլ ցուցումներ, Փասլներ եւ դուրներ:

3. Թղ. 44բ. (պատկերներ). Չոհարն, որ է երեւակ, հարկուր է: — Թղ. 45ա—47բ. Մուշթարին, Մառեթին, Շէմս, Չոհրէ, Աւարիան, Ղէմէր:

4. Թղ. 48ա—59ա. Այլ դուրն որ յիշեմք զթէպիւր աստղերն, որ է ասպեթ, որ կոչի հաստատ: — Թղ. 48բ. Առաջին խոյն եւն:

5. Թղ. 59ա—64բ. Պատկերներ՝ Յուրն, Եկաւորն, Խեցեթիւնն, Առիւծն, Կոյսն, Կշիւն, Կարիւն, Աղեղնաւորն, Այծեղջերն, Ջրհոն, Չուկն:

6. Թղ. 64բ. Այլ դուրն որ յիշեմք զաթիւնայ աղարիւթն: Այլ եւ այլ դուրներ յաջորդաբար: 7. Թղ. 67բ—114բ. Պատկերներ, մեկնութիւններ (աղիւսակներ):

8. Թղ. 115ա. Յանուն Աստուծոյ զթածին... դուրն ժե. եւ մուղարիւթն Բ. եւ աստղարաշխութեան ի կենդանակերպիցն: Մէկ քանի դուրեր է վերջ կու գան Շուրտայն, Պուտայն, Թուրիայն եւ Տալլայն եւն եւն:

9. Թղ. 127բ. Դուրն ժԸ. որ ցուցանէ զանուն զպահերուն, զցորեկիւնին զգիշերօրն վան, ասաց Պալինասն: — Թղ. 128բ. Վասն տլամաթիւն: — Թղ. 130ա—136ա. Դուրն է Բ. որ յիշեմք զտլամաթիւն, որ Ապուտատիւն է ասացել: 10. Թղ. 138բ. Պուլուրքն է. աստղին: — Թղ. 144ա. Այլ դուրն որ ցուցանէ թէ զայս գիտութիւնս, որպէս արնեն եւ զաստիւրուն տալաթիւն, ասաց Ապուտաղարն: Ապա՝ «Խաւն»ները: 11. Թղ. 157ա. Գովասանութիւն լուսըն-

կին, գովասանութիւն զոհարին: — Թղ. 160բ. Ասենք զչարան զայս գիտութեանցս: Ասաց Արիստատալիսն: — Թղ. 165բ. Յիշեմք զանուանքն եւ զիւրեանց զթարքիմն, որպէս զտայ: — Թղ. 169բ. Ասենք աստից ի վեր զիւրեանց գործքն եւ օկտութիւն, որ ի վերայ դոցա զրած է: — Թղ. 175ա. Տասլն, որ յիշեմք զսիրելութեան զեղերն: — Թղ. 178ա. «Ասաց զրոցս շինողն թէ որպէս գտաք զտուտուսն, նոյնպէս եւ գրեցաք եւ գտաք այլ օրինակներ: Ապա աղիւսակներ: — Թղ. 189ա. Վասն ԻԸ. ի լիւսանաց լուսինն». Ապա այլ եւ այլը:

12. Թղ. 218բ. Կապելու: Գրէ է. կտոր թուլիս եւ զամէն թուլիս իր զրոյն: Ապա այլ եւ այլ զեղեր ու զեղազրեր: — Թղ. 225ա. Կայ՝ «այլ եւ նուստ Ստեփանոս արարի եւ օղտեցի բաղմաց»:

13. Թղ. 229ա. «Վասն զեղերոյ զօրութեանց որ ա. ա. առջեւին ի օկտութիւն մարդկանց կամօքն Աստուծոյ ամէն: Դեղեր, զոր գրել են բժշկապետքն»: — Թղ. 232բ. Վասն կուրուրայն ճանաչելոյ: — Թղ. 239ա. Վասն երակաց ճանաչելոյ նշան եւ խառնուածոց եւ յաղթութեանց նոցին:

14. Թղ. 240ա. Ի բանից Միսիսարայ որոյ յինչ է մեծ իմաստուն Պաքրատ, որ ասացեալ է վասն հիւրերին պօհրանին աւուրցն, որ նշան լինի հիւանդին: Ամենայն յառաջին ասեմ թէ ինչ է պօհրանին մեկնութիւնն:

15. Թղ. 243բ. Յաղագս բամին գիտութեանց տանց եւ բաժանումն թէ զինչ իւրք:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ. Առաջին կողքին ետեւը «Սարգիս Ե. Ժամագործեան յեղիպոտոս»: — Թղ. 1ա. Ի թուին Բրիստոսի չձե: 785: տարբեր գրով՝ 24՝ քեաղթ. var bou quitapda, տարբեր գրով՝ Վեցհաղարի է 1894 Փետրվար 20ին ծախու առի այս գիրքս: Մանիշակագոյն քանակով՝ Այս գրքիս անունն է Աղաւիտ Մաղալիտ է: — Թղ. 2բ. Թուական չձե եւ նկար աստղանշմարի մը որ աստղազարդ երկինքը կը գիտէ: — Թղ. 3ա. տարբեր գրով վերի լուսանցքի վրայ. «Ի թուականին Բրիստոսի գրեալ է գիրքս 785 չձե: Վեցհաղարեա է գիրքս»: — Թղ. 221բ. տարբեր գրով՝ «Մովսէս, Գրիգոր, Դաւիթ, Տիրատուր»:

Հ. Հ. ՈՍԿԵՍՆ

